



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՌՕՐԵԱՅ ԲԱՆԱԿՈՒՄ

Հովանաւորութեամբ Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ կազմակերպութեամբ Հայ Առաքելական Եկեղեցւոյ Երիտասարդաց Միութեան Կեդրոնական վարչութեան, եռօրեայ բանակում տեղի ունեցաւ 11-13 Սեպտեմբեր 2009ին, Իզապէլա լիճի շուրջ, Ռիվըրնուք բանակավայրին մէջ, Ֆրեզլոյի մօտ: Բանակումին մասնակցեցան Թեմիս Երիտասարդական միութիւններէն 30 անդամներ, առաջնորդութեամբ Հոգ. Ս. Պարթեւ Կրդ. Կիւլիմեանի: Դաստիարակչական բնոյթ ունեցող այս բանակումը, - որ այս տարուան մէջ երրորդ համագումարն էր,- մաս կը կազմէր «Երիտասարդութեան Տարուան» առիթով նախատեսուած Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի նախաձեռնութիւններուն:

Նախքան բանակումի երթալը, երիտասարդները հաւաքուեցան Կլենտլի Ս. Աստուածածին եկեղեցին եւ աղօթք բարձրացուցին առ Աստուած, ինդրելով Տիրոջ պահպանութիւնն ու պաշտպանութիւնը եռօրեայ բանակումին ընթացքին, ամէն տեսակ պատահարներէ եւ արկածներէ:

Բանակումը ընդգրկեց աղօթքի պահեր, Ս. Գրային խորհրդածութիւն եւ դաստիարակչական բնոյթի գրոյց-դախօսութիւններ: Երիտասարդաց Յանձնախումբի ատենապետը՝ Տիար Րաֆֆի Նալճեան ինք առաջնորդեց Ս. Գրային խորհրդածութեան պահը, իր խօսքին մէջ յատկապէս շեշտելով Տիրոջ ընձեռած պահպանութիւնը եւ փրկութիւնը՝ չարին յարձակումներուն դէմ:

Հայր Պարթեւ ներկայացուց երկու դասախօսութիւններ: Առաջինը՝ մեղքերէ զգուշանալը պայման հոգեւոր կեանքի աճման եւ Տիրոջ հետ անկեղծ հաղորդակցութեան, իսկ երկրորդը՝ դիմացինին ներելը պայման՝ յաւիտենական կեանքի ձեռքբերման: Դասախօսութիւններուն յաջորդեցին հարց-պատասխանի պահեր, որոնց ընթացքին երիտասարդներ Ս. Գրային համարներ կարդացին՝ պատասխան փնտռելով Աստուածաշունչին մէջէն:

Առաւօտուն եւ երեկոյեան, տեղի ունեցան հաւաքական աղօթքի պահեր. ներկաները միասին ընթերցեցին Սաղմոսներ եւ մեր հայրերու գրած աղօթքներէն, երգեցին շարականներ եւ պատարագի երգեր:

Յուզադրուեցաւ հոգեւոր-բարոյական վիտե-երիզ մը, տեղի ունեցաւ խմբային զրոյցներ, առաւօտեան քայլարշաւներ, պտոյտներ եւ հաճելի ժամանց:

Բանակումը նաեւ լաւ առիթ հանդիսացաւ անդրադառնալու եկեղեցական թէ ազգային կեանքէ ներս հայ եկեղեցւոյ կարեւորութեան եւ հայ երիտասարդին գործօն մասնակցութեան:

WESTERN PRELACY ACYA SUMMER CAMP

On the weekend of September 11th, 2009, members of the Armenian Church Youth Association (ACYA) participated in a three-day summer camp at Rivernook Camp near Lake Isabella. The camp was held under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and was organized by the ACYA Central Board, led by Very Rev. Fr. Barthev Gulumian. The camp was the third gathering of the year in celebration of the “Year of the Youth”.

Prior to departing, the youth gathered at St. Mary’s Church in Glendale to offer prayers for a safe trip. They then headed to the campsite where they participated in prayers, Bible studies, and educational sessions. ACYA Chair Mr. Raffi Naljian led the Bible study while Fr. Barthev presented two lectures on spiritual growth and forgiveness. Both lectures were followed by a question and answer session.

In the mornings and evenings, the youth participated in group prayers, read Psalms, and sang hymns. Movies of a religious nature were also shown and there was ample time for discussions, hiking, and other outdoor activities. The retreat also offered the opportunity for the participants to reflect on the role of the Armenian Church in our lives, as well as the role of youth in our religious and national life.